

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՔԱԶԱԼԵՐԵԼ
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՇՆՈՐՀԱԼԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ**

Կիրակի, 18 Նոյեմբեր 2012-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհարանի դահլիճը տարբեր հմայք ունէր: Լիբանանահայ խումբ մը շնորհալի աշակերտ-աշակերտուհիներ, ծնողներ, տնօրէններ եւ ուսուցիչներ եկած էին միասնաբար ողջունելու «Խաչիկ Պապիկեան հիմնադրամ»ի աշակերտական մրցանակի բախտաւորները եւ վերահաստատելու հայ լեզուով, գրականութեամբ, հայոց պատմութեամբ, մշակոյթով եւ քրիստոնէական ասանդութիւններով ու արժէքներով հպարտ հայ աշակերտի իրենց ուխտը:

Արդարեւ, երրորդ տարին ըլլալով, տօնական արտայայտութիւնը կարելի էր կարդալ բոլոր ներկաներուն դէմքերուն վրայ: Լիբանանահայ գրեթէ բոլոր միջնակարգ եւ երկրորդական վարժարանները՝ 17 միջնակարգ եւ 12 երկրորդական կրթօճախներ, 89 երկսեռ աշակերտ-աշակերտուհիներով, մասնակցած էին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կազմակերպած հայ լեզուի եւ գրականութեան եւ հայոց պատմութեան, հայ մշակոյթի եւ կրօնագիտական նիւթերու մրցանքներուն: Բոլորը ուրախ էին եւ միաժամանակ՝ անհամբեր: Հասկաքաղի պահը մօտեցած էր:

Մրցանակաբաշխութեան հանդիսութեան բացումը կատարելով՝ Կաթողիկոսարանի Հայագիտական եւ Կրթական Հարցերու գրասենեակի վարիչ Սարգիս Կիրակոսեան առաջին հերթին ողջունեց ներկաները եւ շնորհակալութիւն յայտնեց լիբանանահայ վարժարաններու կրթական պատասխանատուներուն, ուսուցիչներուն, դատակազմի անդամներուն եւ մասնակից աշակերտներուն, «որոնք իրենց ամբողջական գործակցութեամբ մեծապէս նպաստեցին այս օգտաշատ նախաձեռնութիւնը յաջողութեամբ պսակելու ճիգերուն եւ այս մրցանքին տուին իւրայատուկ գրաւչութիւն»: Այնուհետեւ ան դիտել տուաւ, որ հակառակ նոր ժամանակներու կախարդական նորութիւններուն եւ համակարգչային արհեստագիտութեան արագընթաց զարգացումներուն,

լիբանանահայ աշակերտները կը փորձեն կառչած մնալ ազգային արժեքներուն ու գանձերուն, եթէ իրենց հայագիտական արդիւնքները նոյնիսկ որոշ չափով հեռու կը մնան ցանկալի մակարդակէն:

Եզրակացնելով՝ Ս. Կիրակոսեան շեշտեց, որ մեծագոյն յաղթականը այսօր Հայ Դպրոցն է, իսկ մրցանակակիրները՝ բոլոր մասնակիցները: Ապա, ան հրաւիրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռոյն գահակալ եւ հայ աշակերտի առաջին բարեկամ ու հայր Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, որպէսզի իր ձեռամբ պարգևատրէ բախտաւորները եւ կատարէ մրցանակաբաշխութիւնը:

Մրցանակաբաշխութեան սրտայոյզ պահէն ետք, իր հայրական խօսքը ներկաներուն փոխանցելով՝ Արամ Ա. Կաթողիկոս առաջին հերթին ընդգծեց, որ...